ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » հուլիսի 2023 թվականի N 05 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելուն:

2. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանին.

1) միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**